

« Եւ չիցէ որ ուրեմն որ զանմեղս զիս փրկեսցէ :
 Շատք իսկ մեք իդձ լինէաք , այլ յետնեցաք 'ի գործոցն :
 Իսկ նա յերկիր անկանէր 'ի պատանայոյն իւրոց ,
 Զրզիտեմ'լուծեալ որպէս՝ վերջին շրնչովն յըռնդունա .
 Զիք յաչաց եղեւ ձիանն , և սոսկալի նրչան ցլցն ,
 Եւ ոչ թէ հար զիտաց որ և ոչ տեսաւ հետք նորա :

Քարգմ. Հ. ԱՐՄԷՆ ՍԻՒՔՐԵԱՆ,



ՍԻՒՔՐԵԱՆ ԿԱՌՄԱՆԱՆ

ՏՈՄԷՆԻՔԻՆՈՅ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԻՆ

Կումական Սիբիլային պատկերը ,
 զոր կը ներկայացընենք ընթերցողաց
 ներկայ պրակիս մէջ , ճամէնիքինոյ ե .
 ընելի պատկերահանին ունեցած զա .
 նազան և գեղեցիկ գործոց մէկն է ,
 որուն վարուց վրայ պատշաճ կը դա .
 տինք այս առթիւ համառօտ տեղե .
 կութիւն մը տալ : — Այս նշանաւոր
 անձս , կոչկաւարի մը որդի , ծնաւ 'ի

Պոլսնեա յամին 1551 : Ուսաւ զնկար .
 չութիւն Դիոնեսիոս Բալվարի քով ,
 որ օր մը զինքը ծեծելով վռնտեց ,
 որովհետեւ տեսաւ որ ծածուկ յզոս .
 տինոս Գարրաչիի գծադրութիւնքը
 կ'օրինակէր : Եւամբիէրի շարունակեց
 իր ուսումը այս վերջնոյս քով Ալ .
 պանոյի հետ , որուն ցկեանս բարե .
 կամ եղաւ :

Տոմէնիքինոյ սկզբաւն բթամիտ և տար-
տամ կ'երևնար. միշտ ինքզինքը կը
սրբագրէր և երբեմն անիրաւ խստու-
թեամբ, որով եղաւ ճիշդ և կենդանի
գծագրող, գունաւորող բնական, վեր-
ջապէս այնպիսի գծաւարարիւտ ձրիւք
պատկերահան մը, որ Մէնկա զայն ա-
ռաջին կարգի պատկերահանաց մէջ
դասելու համար ուրիշ բանի չէր փա-
փաքէր բայց եթէ քիչ մ'աւելի բարձր-
աստիճան չքեցուցեան: Տոմէնիքինոյ
բոլորովին իր արուեստին զբաղած էր.
ընկերութեանց մէջ կը մոնար, կամ թա-
տրոններ և վաճառատնոցներ կ'երթար՝
պարզ դիտելու թէ բնութիւնն ինչպէս
նկարած է իւրաքանչիւրին երեսնաց
վրայ՝ ուրախութիւն, բարկութիւն,
քաղցրութիւն, արհամարհանք և եր-
կիւղ: Շտապաւ կը ծրագրէր ինչ որ
իրեն վրայ աւելի ազդեցութիւն կ'ընէր,
և կրից շարժումներն ալ որոնք իրեն
ուշադրութիւնը կը գրաւէին: Պէլլորի
կ'ըսէ՝ թէ այս կերպով Մամբիէրի վար-
ժեցաւ զոգիս նկարել, և զկեանս գու-
նաւորել:

Բաւական ժամանակ 'ի Պոլոնեա աշ-
խատելէն վերջը, Բարմա գնաց Տոմէ-
նիքինոյ, յետոյ Հռովմ, ուր Մենիքաղ
Քարրաչի բոլորովին զինքը կատարե-
լագործեց: Այս բաղքիս մէջ իր առա-
ջին երկատիրութիւնն եղաւ Արոմիս
նպանեալ 'ի վարագէ, որ գեռ կը
տեսնուի ֆարնեպէ թանգարանին պար-
տիզին հովանոցին մէջ: Քիչ վերջը
նկարեց իւր անուանի Սուրբ Անդրէա-
սը 'ի Սուրբն Գրիգոր, Կուխտոյի հետ
միջեւով, որ նաև ինքն հրաման ընդու-
նեցաւ նոյն առարկայն նկարելու Տոմէ-
նիքինոյի շինածին դիմաց: Առաջնու-
թիւնը Մամբիէրիի շինածն ստացաւ:
Այս նիւթիս նկատմամբ Աննիքաղ ըսաւ
թէ Կուխտոյի ջրաներկն ուսուցչի գործ
էր, իսկ Տոմէնիքինոյինը աշակերտի,
վրայ բերելով թէ աշակերտին աշխա-
տութիւնն աւելի կ'արժէր քան զվար-
ժապետինը: Այն ժամանակները քանի
մ'անձանց խրախուսանք ձեռք զար-
կաւ Սուրբ Հերոնիմուսի Հաղորդոշ,

քեան. արդարեւ գերազանց երկատի-
րութիւն մը, յորում հաւատարիմ կե-
ցած է իր Աննիքաղ վարժապետին
սկզբանը, որ պատկերի մը մէջ տասն
և երկու գէմքէ աւելի չէր դնէր: Բու-
սէն Հռովմայ երեք գեղեցկագոյն պատ-
կերներն կը համարի Ռափայելի Այ-
րակերպութիւնն, Տոմէնիքինոյի Սուրբ
Հերոնիմուսը և Դանիէլ վիզէրրացոյ
Խաչէն իջումը (Déposition): Տոմէնի-
քինոյ 33 տարեկան էր երբ լմնցուց
իր Սուրբ Հերոնիմոսը: Այս պատկերս
կ'ամբաստանուի իբրեւ ծառայական
նմանութիւն մը Օգ. Քարրաչիի շինա-
ծին, որ մի և նոյն նիւթը կը ներկայա-
ցընէ, բայց ամբաստանողը չեն մտածե-
ր թէ ինչ պարագաներու մէջ կը գտ-
նուէր այն ժամանակ հեղինակը: Իրեն
հպատակող և երկչոտ բնաւորութիւնը
զինքը գեռ Աննիքաղայ իշխանութեան
տակ կը բռնէր, որ իր Օգոստինոսի եղ-
բորը նախանձորդ եղաւ միշտ: Կը տես-
նենք հօս որ գեռ ուրիշ ձախող հա-
կամիտութիւնը ալ կը պախարակուին
Տոմէնիքինոյի վրայ, որոնք իր հանձա-
րոյն չեն համաձայնիր. և անշուշտ Ան-
նիքաղ ստիպեց զինքը սրբագրելու կեր-
պով մը Օգոստինոսի Սուրբ Հերոնիմո-
սը, յուսալով որ երկրորդ գործը քան
զառաջինը պիտի գերազանցէր, որով
այն ժամանակ իր եղբայրը պիտի ստի-
պուէր իր փորագրութեանցը վերա-
դառնալու:

Տոմէնիքինոյ յետոյ գնաց 'ի Պոլոնեա
ուր յորինեց վարդարանի Ս. Կոչար
(Vergine del Rosario) և Սուրբ Ալեքսի
նախառնկոչքիւնը, որք 'ի թանգարան
գրուեցան: Անկէց դարձաւ 'ի Հռովմ,
Սուրբ Անդրէաս տէլլա վալլէ կոչուած
եկեղեցոյն մէջ նոյն սրբոյն ամբողջ
վարքը ջրաներկ նկարելու: Երբ տախ-
տակամածք բացուեցան հասարակաց
ցուցնելու համար այն աշխատութիւնը՝
Տոմէնիքինոյի թշնամիք այնքան զայրա-
ցան որ քիչ մնաց ջնջել պիտի տային
ամբողջ այն փառաւոր գործը. հաղիւ
քանի մը զօրաւոր պաշտպանք արդիւն-
ցին այս նախատինքս չգործադրելու:

Պատկերահանս Նաբոլի հրաւիրուած ըլլալով՝ Գանձուն խորանը ջրաներկ նկարելու համար, այնչափ նախառա- կան մահացուցումն կրեց՝ ի զանազան անձանց՝ որ հրաժարեցաւ և ի Հռովմ փախաւ. բայց յետոյ լսելով որ այս պատճառաւ իր կինը և որդիքը բանտ դրուեր են, դարձաւ իր գործը աւարտելու. և հօն մեռաւ վաթսնամեայ յամին 1641: Կ'ըսուի թէ թունաւո- րուած ըլլայ և զժբաղդաբար ճշմարտանման կ'երեի այս:

Արդ ինչ պատճառի տալու է այդ պիսի բարբարոսական հալածանք: Ամենայն մատենագիրք համաձայն են՝ որ այսմ պատճառ եղան միայն իր բարձր հանճարն և բարի սիրտն, պարզութիւնն և համեստութիւնն: Ուստի յաջորդ սերունդք, որոնք շատ անգամ աւելի լաւ կը ճանչնան քան քնախորդա՝ անձանց ձիրքերը, առաջնակարգ պատկերահանաց մէջ կը դասեն զՏոմէնիքինոյ, յետ Ռափայելի, Գորրէճիոյի և Դիյիանոսի:

ՅԱԿՈԲ ՕՖԷՆՊԱԽ ԵՐԱՍԻՇՏ

Շատ օր չէ որ մեռաւ վարժապետն Յակոբ Օֆէնպախ. ի Բարիզ իրեն չբեղ յուզարկաւորութիւն ըրին: Օֆէնպախ նորանշան և մտադրութեան արժանի կեանք մ'ունեցաւ, թէ իրեն բնութեամբ և թէ պարագային համար յորում իր հանճարը զարգացաւ. — կեանք մրցանաց և խեղճութեանց, խառն յաղթանակաց և անհաւատալի բաղդից հետ: Ծնեալ ի Գոյնիա յամին 1819 և եկեալ ի Բարիզ ի 1842, առաջին արգելքը՝ զոր կրցաւ ի բաց թօթափել՝ ազգութեանն էր. ինքը գերմանացի՝ զաղղիացիներէն աւելի գաղղիացի եղաւ:

Պարահանդիսից մէջ վին զարնող, արուեստականաց գլուխ, կատակեր, զուլթեան թատրոնաց մէջ զլխաւոր վարիչ և պարահանդիսից ուղղիչ, Օֆէնպախ երեք առաջին տարիներն անձկութեամբ և նեղութեամբ ապրեցաւ ի Բարիզ, մինչև այն ատեն երբ իրեն մեծ բաղդ համարելով, ամիսը 83 ֆլանքով մտաւ իբրև նուագածու Օրէրա Գոմիք թատրոնին երաժշտաց մէջ: — Իր ստոյգ առաջին թատրոնական աշխատութիւնը Ալգուլը եղաւ՝ Դուր տ'Ովերները փոքր թատրոնին հա-

մար, և ոչ եթէ կրկին Կոյրքը (Les Deux Aveugles), ինչպէս որ կը պնդեն գրեթէ բոլոր իր կենսագրութիւնը գրողները: Օֆէնպախ գրեց Կրկին Կոյրքը երբոր չինեց Պոլֆ Բարիզիէն. ներուն թատրոնը, բացման համար, որ եղաւ ի 5 մայիս 1855. այս գործս իր առջի նուագաւոր խաղիկը եղաւ, որուն յաջորդեցին Որփէոս (Orphée), Գեղեցիկն Հելենէ (La Belle Hélène) և ուրիշ շատեր, որոնք արագապէս իրեն համբաւը հոչակեցին իբրև զուարթ և աշխոյժ երգայարդար:

Օֆէնպախի յաջողութեանց և արծաթեյ փառաւոր ժամանակը մինչև կայսրութեան անկումը տևեց, և տասն ուհինգ տարի երաժշտական խեղկատակ յարասութեանց շարունակ գեղադէտ (caleidoscope) մ'եղաւ, մեծ մայրաքաղաքին ամեն թեթև թատրոնաց վրայ: — Յամին 1867, Համալխարհական հանդիսին ժամանակ, երբոր կայսրութիւնն իրեն վերջին ծայրն էր, հանդիսացաւ առաջին անգամ իր Կրաւն Տիւրէն տը Կէրոլլոյայնները՝ վարիչից թատրոնին մէջ. մեծ էր բոլոր Բարիզու հետաքրքրութիւնը և անհամբերութիւնը. կայսրն, կայսրուհին, Արքու-